ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«02» մայիս 2017թ. No 1412 - Ա

«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄՆԵՐՈՒՄ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ» ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Նախադպրոցական ուսումնական հաստատություններում վնասվածքների կանխարգելում» մեթոդական ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2017 թվականի մայիսի 02-ի N 1412 - Ա հրամանի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Սույն մեթոդական ուղեցույցը նախատեսված է մանկական նախադպրոցական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ նախադպրոցական կազմակերպություն) (մանկամսուրներ, մանկապարտեզներ, մսուր-մանկապարտեզներ և այլն) անձնակազմի համար՝ անկախ սեփականության ձևից:

2. Երեխաների շրջանում վնասվածքները պայմանավորված են շրջակա միջավայրում նրանց վատ կողմնորոշվելու, զբոսանքի, բակում խաղալու ժամանակ ոչ կարգապահ վարքագծի, սահելու, զվարճահարմարանքներից, ծառերից, ցանկապատերից և այլ սպորտային հարմարանքներից ընկնելու, ինչպես նաև՝ մանկական նախադպրոցական կազմակերպությունների խմբասենյակներում խաղերի ժամանակ երեխաների միմյանց հետ, ջեռուցման համակարգի մետաղական հատվածներին, ապակեպատ դռների հետ բախվելու հետևանքով:

3. Բազմաթիվ վնասվածքներ երեխաները ստանում են նաև բակերում անվտանգ պայմանների բացակայության պատճառով:

4. Մանկական վնասվածքները հաճախ ունենում են օբյեկտիվ պատճառներ՝ մանկական շարժունակություն (հակվածություն չմտածված ռիսկի, սեփական գործողությունների հետևանքները կանխատեսելու և իրավիճակը գնահատելու անկարողություն):

5. Ամբողջ աշխարհում մանկական վնասվածքներն ունեն որոշակի օրինաչափություն և պարբերականություն՝ երեխաները ստանում են նույն տեսակի վնասվածքներ, նույն վտանգավոր իրավիճակներում հայտնվելու պատճառով, որի նախադրյալները երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններն են, որոնք հաշվի առնելով, մեծահասակների համապատասխան գործողությունները կարող են կանխել դժբախտ պատահարները:

6. Երեխաների շրջանում առավել հաճախ հանդիպող վնասվածքների տեսակներն են.

1) վայր ընկնելը, հիմնականում, սայթաքելու հետևանքով,

2) վայր ընկնելը բարձունքից (կահույք, պատշգամբ, ծառ, տանիք և այլն),

3) վնասվածքներ սուր առարկաներով (մկրատ, ապակի, ասեղ, մեխ/գամ, դանակ և այլն),

4) այրվածքներ (եռացած ջուր, կրակ, էլեկտրական հոսանք, քիմիական նյութեր),

5) բարձունքից ընկած առարկաներով (դարակաշար, սկահակ, ծաղկաման, սառցալեզվակ) վնասվածքներ,

6) ցրտահարություն (ցրտաշունչ, քամոտ եղանակին դրսում երկարատև գտնվելը),

7) կծվածքներ (շուն, կատու, կրծողներ, միջատներ և այլն),

8) թունավորումներ (թունավոր բույսեր և հատապտուղներ, սնկեր, դեղեր, վատորակ սնունդ),

9) օտար իրերի (մետաղադրամներ, կոճակներ, խճանկարի տարրեր, ավազ և այլ մանր իրեր) օրգանիզմ ներթափանցելու հետևանքով առաջացած վնասվածքներ,

10) գերշարժունակության հետևանքով առաջացած վնասվածքներ (միմյանց հետ, կահույքի անկյուններին, դռներին բախվելու հետևանքով):

7. Նախադպրոցական կազմակերպություններում երեխաների վնասվածքների հիմնական պատճառները մեծահասակների կողմից ոչ պատշաճ հսկողությանը և տրավմատիզմի կանխարգելման միջոցառումների ոչ պատշաճ իրականացումն է:

8. Այն, ինչ յուրացվում է մանկական տարիքում, հետագայում վերածվում է սովորության: Դա կարևորվում է նաև մանկական վնասվածքների կանխարգելման

հարցում: Դաստիարակչական աշխատանքի արդյունավետության ապահովման համար մանկական նախադպրոցական կազմակերպություններում ստեղծվում են բարենպաստ սանիտարահիգիենիկ պայմաններ՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 857 հրամանով հաստատված «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) N 2.III.1 սանիտարական նորմերի և կանոնների:

II. ՄԱՆԿԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐԸ

9. Կազմակերպության խմբասենյակներում և երեխաների ընդունելության սենքերում անվտանգ միջավայր ստեղծելու նպատակով՝ պահարանները և դարակները, ներքին դռների ապակեպատ հատվածները ամրացվում են:

10. Ջեռուցման համակարգի մետաղական հատվածներն ապահովվում են պաշտպանիչ վահանակներով՝ հնարավոր այրվածքներից խուսափելու նպատակով: Երեխաներին չեն թողնում առանց ուշադրության սենյակում, որտեղ տեղադրված է ցանկացած տիպի օդի տաքացուցիչ սարք:

11. Կազմակերպության աստիճանավանդակները ապահովվում են բազրիքներով և վանդակաճաղերով: Խորհուրդ չի տրվում որպես զարդեր աստիճանավանդակների հարակից պատերին կախել ծանր նկարներ, ծաղկամաններ:

12. Լվացող, ախտահանող նյութերը և դեղորայք չեն պահվում խմբասենյակներում, ննջասենյակներում, սանհանգույցներում և խոհանոցում՝ դրանք պահում են այդ նպատակով հատուկ առանձնացված, երեխաների համար անհասանելի տեղում:

13. Կազմակերպության ամբողջ տարածքը, այդ թվում՝ բաց բակը, պահվում է մաքուր, այն լինում է ցանկապատված՝ թափառող կենդանիների մուտքը կանխելու նպատակով: Տարածքի մաքրումն իրականացվում է մինչև երեխաների ընդունելությունը, կամ նրանց գնալուց հետո:

14. Ամռանը տարածքը ջրվում է օրը երկու անգամ: Ձմռանը խաղահրապարակները, ուղիները մաքրվում են ձյունից:

15. Հողամասում տարին երկու անգամ՝ գարնանը և աշնանը, կատարվում է ծառերի և թփերի էտում, հատուկ ուշադրություն դարձնելով չոր և ցածր ճյուղերի վրա:

16. Ծառերի պարարտացման և մշակման համար չեն օգտագործվում թունաքիմիկատներ՝ երեխաների և անձնակազմի հնարավոր թունավորումների կանխարգելման նպատակով:

17. Տարածքի կանաչապատման համար չեն օգտագործվում թունավոր պտուղներ և փշոտ տերևներ ունեցող ծառեր և թփեր:

18. Տարածքում տեղակայված սարքավորումները, զվարճահարմարանքները, սպորտային գույքը գարնանը (շահագործումից առաջ) և ըստ անհրաժեշտության ենթարկվում են պարտադիր տեխնիկական զննման: Բացի այդ, կատարվում է խմբասենյակների, բակում տեղակայված տաղավարների կահույքի ամենօրյա զննում՝ վնասվածքներ առաջացնելու առումով թերությունները հայտնաբերելու նպատակով:

19. Երեխաները կարող են լրջորեն վնասվել, մատները կամ որևէ առարկա էլեկտրական վարդակների մեջ մտցնելով: Դա կանխելու նպատակով վարդակները փակում են, իսկ էլեկտրական լարերը անհասանելի են դարձնում երեխաների համար էլեկտրահարումից խուսափելու նպատակով:

III. ՄԱՆԿԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Կազմակերպությունների աշխատակիցների կարևորագույն խնդիրները երեխաների շրջանում դժբախտ պատահարների կանխումն է, ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ փողոցում, հանգստի վայրում, զբոսայգիներում և այլն: Դա ապահովելու նպատակով վարչակազմի կողմից ապահովվում է անվտանգ միջավայր, ինչպես նաև սահմանվում է հսկողություն անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ:

21. Դաստիարակող անձնակազմի կողմից սահմանվում է հսկողություն երեխաների նկատմամբ՝ նախաճաշի, ճաշի, ետճաշիկի ժամանակ տաք սնունդից հնարավոր այրվածքներից խուսափելու նպատակով:

22. Երեխաները մշտապես գտնվում են անձնակազմի ուշադրության ներքո: Անձնակազմը հետևում է, որ սնունդ ընդունելու ժամանակ երեխաները ճիշտ օգտվեն սպասքից:

23. Հերթապահության ժամանակ երեխաներին չեն ներգրավում բուֆետային մասից սնունդ ստանալու, տաք սնունդ բաժանելու գործընթացին:

24. Փոքր տարիքի երեխաներին խորհուրդ չի տրվում տալ մանր կորիզներով կամ սերմերով ուտելիք:

25. Սննդային թունավումներից խուսափելու նպատակով՝ նախադպրոցական կազմակերպություններում երեխաների սննդի կազմակերպումն իրականացնում են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի օգոստոսի 12-ի թիվ 42-Ն հրամանի հավելվածով հաստատված «Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-01-2013 սանիտարական կանոնների և նորմերի:

26. Խաղալիքների ընտրությունը կատարվում է երեխաների տարիքին համապատասխան: Օգտագործվող խաղալիքները ունենում են որակը և անվտանգությունը հավաստող փաստաթղթեր: Խաղալիքների ընտրությունը և օգտագործումն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 857 հրամանով հաստատված «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) N 2.III.1 սանիտարական նորմերի և կանոնների: Մանր առարկաները, որոնք կարող են առաջացնել շնչարգելություն, պահվում են երեխաների համար անհասանելի տեղում:

27. Խմբասենյակներում, երեխաների ընդունման և այլ սենքերում չեն դրվում տաք ջրով դույլեր, լվացող-ախտահանիչ միջոցներ, ինչպես նաև մաքրման պարագաներ:

28. Անձնակազմը ծնողների հետ իրականացնում է բացատրական աշխատանք՝ վնասվածքների կանխարգելման վերաբերյալ, հիշեցնում է լուցկիները, դեղորայքը, կտրող և այլ վտանգավոր իրերը երեխաների համար անհասանելի տեղերում պահելու, դեղատուփի պարունակությունը պարբերաբար ստուգելու անհրաժեշտության մասին:

Բոլոր դեղամիջոցները պահում են բանալիով փակվող, երեխաների համար անհասանելի վայրում տեղադրված արկղիկում:

29. Վնասվածքների կանխարգելման նպատակով սահմանվում է հսկողություն երեխաների կողմից փողոցում գտած կամ այլ երեխաներից վերցրած տարբեր անհայտ և վտանգավոր իրերի օգտագործմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով մարտկոցներով խաղալիքներին և խաղերին:

30. Զբոսանքի ժամանակ անձնակազմը հետևում է, ինչով է զբաղված երեխան՝ գետնից գտած տարբեր իրեր բերանը տանելը կանխելու նպատակով:

31. Նախադպրոցական հաստատության անձնակազմում քննարկվում են վնասվածքների բոլոր դեպքերը, պարզաբանվում են դրանց հանգամանքները՝ հետագայում դրանցից խուսափելու համար:

IV. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32. Երեխայի կողմից անվտանգության կանոնները պահպանելու և շրջակա միջավայրի իրերի անվտանգ գործածությունը ապահովելու նպատակով նրան տրամադրվում են գիտելիքներ այդ իրերի հատկությունների վերաբերյալ: Շատ կարևոր է երեխաներին սովորեցնել զգուշավորության, որը բացակայում է նախադպրոցական տարիքի երեխաների մոտ, նրանց մոտ ձևավորել որոշակի հմտություններ, որոնք կօգնեն գիտակցաբար խուսափել վնասվածքներ առաջացնող իրավիճակներից:

33. Անվտանգ վարքագծի կանոններին երեխաներին սովորեցնում են ակտիվ գործունեության ընթացքում՝ խաղերի, տարատեսակ վարժությունների, երեխաների գիտակցության համար հասանելի հասարակական կյանքի տարբեր իրադարձությունների և երևույթների բեմականացման միջոցով, բնության հետ ծանոթանալիս:

34. Երեխաներին բացատրվում է, որ խստիվ արգելվում է խաղալ լուցկու, կրակի, էլեկտրական սարքավորումների հետ, բացել գազօջախի ամբարձիչները:

35. Խորհուրդ չի տրվում օգտագործել լուցկիները դիդակտիկ նյութ պատրաստելու համար: Միջին և ավագ նախադպրոցական տարիքի երեխաներին սովորեցնում են ճիշտ օգտագործել մկրատ և այլ գործիքներ:

V. ԱՇԽԱՏԱՆՔ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

36. Մանկական վնասվածքների նվազեցման աշխատանքները լիարժեք և արդյունավետ է ծնողների ակտիվ աջակցությամբ: Առաջին քայլերը երեխան անում է ընտանիքում, որտեղ ստանում է սովորությունները ձևավորող առաջին հմտությունները:

37. Ծնողների հետ աշխատանքն ուղղված է սեփական երեխայի առողջության հարցում իրենց անձնական մասնակցության և անձնական ու սոցիալական պատասխանատվության դերը գիտակցելուն:

38. Շատ կարևոր է համոզել ծնողներին, որ իրենք կարող են սովորեցնել երեխաներին խուսափել վնասվածքներ առաջացնող վտանգավոր իրավիճակներից: Աշխատանքը կառուցվում է այնպես, որ ծնողները մտածեն այդ խնդրի շուրջ և հասկանան, որ վտանգավոր իրավիճակները հանդիպում են բավական հաճախ և իրենց երեխաները բացառություն չեն կազմում:

39. Այն ներառում է.

1) Ծնողին տվյալ տարիքի երեխայի հոգեկան և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների, շրջակա միջավայրում նրա վարքագծի վերաբերյալ գիտելիքների տրամադրում,

2) պատասխանատվության զգացումի, ուշադրության, կանխատեսության, երեխայի հետ զգուշությամբ վարվեցողության հմտությունների զարգացում,

3) տվյալ տարիքի երեխայի մոտ առավել հաճախ հանդիպող վնասվածքներ առաջացնող իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում՝ նշելով, երբ և ինչպիսի վնասվածքներ են հնարավոր,

4) տարբեր իրավիճակներում տուժած երեխային առաջին օգնության կանոնների ուսուցանում,

5) տնային պայմաններում երեխայի հետ տարբեր զբաղմունքների կազմակերպման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

40. Ծնողների հետ պարբերաբար իրականացվում են զրույցներ վնասվածքների դեպքերի հավանականության մասին շինություններում, ինչպես նաև փողոցում, ջրամբարների մոտ, կրակի հետ խաղերի վտանգավորության մասին, ճանապարհա-տրանսպորտային կանոնների վերաբերյալ: Կարևոր է նաև ծնողներին բացատրել, թե ինչպիսի ծանր հետևանքներ են ունենում բարձրությունից ընկնելը, թունավորումները, այրվածքները՝ զրույցի ժամանակ օգտագործելով պարզ արտահայտություններ և խուսափելով բժշկական տերմիններից:

41. Ծնողները ներգրավվում են երեխաներին ճանապարհատրանսպորտային կանոններին ուսուցման գործընթացում՝ մանկապարտեզի ճանապարհին երեխաներին բացատրելու, կանոնները ներկայացնելու միջոցով, ճանապարհը միայն թույլատրելի տեղում անվնելու, փողոցում ուշադիր լինելու սովորեցնելու միջոցով: Ծնողներին հիշեցվում է նաև, որ երեխաներին կարելի է մեքենայով տեղափոխել միայն մանկական նստելատեղում. գլխավոր ուղևորը երեխան է:

42. Մեծահասակների անուշադրության հետևանքով կամ նրանց չենթարկվելու հետևանքով նախադպրոցական հաստատությունում երեխաների ստացած վնասվածքները քննարկվում են ժողովների ժամանակ՝ հրավիրելով բոլորի ուշադրությունը՝ հետագայում նման դեպքերից խուսափելու նպատակով:

VI. ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆԿՅՈՒՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

43. Խորհուրդ է տրվում յուրաքանչյուր խմբասենյակում ձևավորել աննկյուն տրավմատիզմի կանխարգելման վերաբերյալ՝ ծնողներին ուղղված խորհուրդներով գեղեցիկ ձևավորված ստենդի կամ շարժական թղթապանակի տեսքով:

44. Նյութերը պարբերաբար փոխվում են, կախված տարվա եղանակից, քանի որ մանկական վնասվածքներն ունեն սեզոնականություն: Օրինակ՝ շան կծածի դեպքերն ավելի հաճախ հանդիպում են մայիս ամսին: Պատուհանից, պատշգամբից ընկնելու դեպքերն ավելի հաճախ արձանագրվում են գարնանը: Ամռանը ավելի հաճախ

արձանագրվում են վնասվածքներ, որոնք ստացել են հեծանիվ վարելու հետևանքով: Ձմռանը առավել հաճախ վնասվածքներ ստանում են սահնակով, դահուկներով, չմուշկներով սահելու, հոկեյ խաղալու ժամանակ:

45. Ստենդերը լինում են գունավոր, վառ, պատկերազարդ, ուշադրություն գրավող: Դրանք նպատակահարմար է տեղակայել միջանցքում կամ հանդերձարանում, որտեղ հաճախ են լինում ծնողները: